ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 5
№ ՇՀԱՊՁԲ-7/15-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 14 -ը փետրվարի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Էլիտ Կապիտալ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 18.02.2016թ. կնքված № ՇՀԱՊՁԲ-7/15-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը, և այն փաստը որ "Էլիտ կապիտալ" ՍՊԸ -ն համաձայնվել է գնման ժամանակացույցում ներառված դաշտային օրապարենի /Հատուկ ստորաբաժանումների համար նախատեսված չոր օրապահիկ /ռացիոն N2// առաջարկված միավորի գինը նվազեցնել 3 570 ՀՀ դրամի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 28 560 000 /քսանութ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ ք.Երևան,Միրաքյան 23, շին 8 «Արմսվիսբանկ» ՓԲԸ Հ/Հ 250 001 021 337 0100 ՀՎՀՀ 01246073 տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Գնման առարկան	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Քանակը	Ընդհանուր գումարը	Ապրանքի մատակարարումը 2018թ. ըստ ամիսների					
						Ապրիլ	Մայիս	Հունիս	Օգոստոս	Հոկտեմբեր	Նոյեմբեր
1	Դաշտային օրապարեն /Հատուկ ստորաբաժանումների համար նախատեսված չոր օրապահիկ /ռացիոն N2//	հավաքածու	3 570	8 000	28 560 000	1 250	1 250	1 250	1 250	1 500	1 500
Ընդհանուր գումարը՝					28 560 000 /քսանութ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ						

Ծանոթություն՝ Մատակարարման վայրը՝ Երևանի կենտրոնական պարենային բազա /ք. Երևան, Սարմի 103 հասցեում/:

Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի ֆինանսավորման անվանատուի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ									
		CPV-ի կոդը	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Դաշտային օրապարեն /Հատուկ ստորաբաժանումների համար նախատեսված չոր օրապահիկ /ռացիոն N2//	15897100/2/10/20	4462500	8925000	8925000	13387500	17850000	17850000	23205000	28560000	28560000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
ավտոմոբիլների գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ ռեսուրսների պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Էլիտ Կապիտալ» ՍՊԸ
ք.Երևան,Միրզոյան 23, շին 8
«Արմսիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 250 001 021 337 0100
ՀՎՀՀ 01246073

տնօրեն Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ